ռուս-թուրքական պատերազմի սկսուելու պատճառով: Այդ ընթացքում Հերակլ Բ-ի եւ Ցաթհ Ալի խանի յարաբերութիւնները դառնում են դաշնակցային, եւ նրանց միջեւ 1787 թ. պայմանագիր է կնքւում՝ ուղղուած Իբրահիմ խանի դէմ: Ստանալով Շաքիի Մուհամմադ Հասան խանի հնազանդութիւնը՝ Ցաթհ Ալի խանը Հերակլ Բ-ի հետ 1788 թ. գրաւում է Գանձակը: Դաշնակիցները ծրագրում էին, որ 1789 թ. գարնանը Ղուբայի խանն անցնելու էր Ա-րաքսը եւ շարժուէր դէպի Իրանի խորքը, իսկ Հերակլը վերահսկելու էր իրավիճակն Այսրկովկասում ու Դաղստանում, սակայն Ցաթհ Ալի խանի վերահաս մահը (1789 թ.) ձախողում է պլանները:

Այսպիսով՝ Գէորգիեւեան դաշնագրի կնքումից եւ Ղրիմի միաւորումից յետոյ (1783 թ.) ռուսական կառավարութիւնը Այսրկովկասի եւ մերձկասպեան խանութիւնների նկատմամբ իրականացուող պասիւ՝ «անտարբերութեան քաղաքականութիւնը» փոխարինում է ակտիւ դիւանագիտութեամբ[50]: Հիւսիսարեւելեան Այսրկովկասի խաներն անհանգստանում էին տարածաշրջանում ռուսական իշխանութեան ամրապնդմամբ, ինչի հետեւանքով իրենք կորցնելու էին ինքնուրոյնութիւնը: Վրաստանում գտնուող ռուսական ռեզիդենտ Ս. Բուրնաշեւը նշում էր, որ «ադրբիջանական ինքնիշխան խաները», վախենալով տարածաշրջանում ռուսական ազդեցութեան ամրապնդումից, շրջւում էին դէպի Թուրքիա[51]:

Ցատկանշական է, որ 1783 թ. յետոյ Ռուսաստանը կովկասեան տիրակալների ու խաների նկատմամբ առաւել կոշտ դիրքորոշում էր որդեգրել: Այսպէս՝ 1783 թ. Իբրահիմ խանը, վախենալով հայկական թագաւորութեան վերստեղծման Ռուսաստանի ծրագրերից, իր հնազանդութիւնն է յայտնում ռուսական գահին եւ պատրաստակամութիւն յայտնում հարկ վճարել, ապա իշխան Պ. Պոտեմկինը ասում է, որ «հարկը, որ հարկում է ռուսական կայսրուհին, դա հաւատարմութիւնն է»[52]: Սակայն ԺԸ. դ. 80-ական թթ. Ռուսաստանն այսրկովկասեան տիրակալներից ակնկալուող «հարկի»՝ հաւատարմութեան դիմաց ստիպուած էր հաշուի նստել նրանց հետ: Շուրջ երեսուն տարի մասնակցելով տարածաշրջանային զարգացումներին՝ Ռուսաստանը Դերբենդից մինչեւ Բաքու ձգուող տարածքի վրայ առաւել նախընտրելի տարբերակ էր համարում կանխատեսելի քաղաքական իրավիճակը՝ Ցաթհ Ալի խանի գերիշխանութեամբ:

Այսպիսով՝ Ռուսաստանը չէր ցանկանում խախտել Հիւսիսարեւելեան Այսրկովկասում իրերի նախկին վիճակը, որը ձեւաւորուել էր 1750-1770-ական թթ. ընթացքում, անգամ՝ չէյխ Մանսուրի վտանգի վերացման հնարաւորութեան պարագայում: Այս հանգամանքը խօսում էր Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի համար Հիւսիսարեւելեան Այսրկովկասի ունեցած կարեւոր նշանակութեան մասին:

Այսպիսով՝ ԺԸ. դ. երրորդ քառորդում ռուսական կառավարող շրջանները Պետրոս Ա-ի կովկասեան քաղաքականութեանը՝ մերձկասպեան տարածքները մինչեւ Գիլան զէնքով գրաւելու ծրագրին, հակադրում են թուրքական վտանգը չէզոքացնելու եւ դիւանագիտական ճանապարհներով Օսմանեան կայսրութեանը հնարաւոր հեռաւորութեան վրայ պահելու ռազմավարութիւնն ու տեղի խաներին սիրաշահելու քաղաքականութիւնը:

50 **О. Маркова**, նշ. աշխ. էջ 159:

51 **С. Бурнашев**, *Описание областей Адребижанских в Персии и их политическаго состояния*, Курск, 1793, с. 5.

52 **П. Бутков**, նշ. աշխ., էջ 144:

ՆԻԿՈՄԻԴԻԱՅԻ «ԲԻԹԱՆԻԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910-1912 ԹԹ.)

Մարիամ Յովսէփեան

Նիկոմիդիան Օսմանեան կայսրութեան հայկական գաղթավայրերից մէկն էր: 1878 թ. դրութեամբ Նիկոմիդիա գաւառում հայերի թիւը հասնում էր 70.000-ի[1]: Թէեւ հայերն ապրում էին Նիկոմիդիայի տարբեր բնակավայրերում, բայց հիմնականում կենտրոնացած էին Նիկոմիդիայի գաւառակենտրոն Իզմիտում, Պարտիզակ եւ Ատաբազար քաղաքներում եւ Օվաճըգ գիւղաւանում: Նիկոմիդիա գաւառում հայերը կարեւոր տնտեսական լծակներ ունէին: Բաւական է ասել, որ Իզմիտի կենտրոնական քարակերտ երկու շուկաների տէրերը հայեր էին, իսկ Պարտիզակում պաշտօնավարում էին ոչ թէ թուրք, այլ հայ պաշտօնեաներ, եւ այդ քաղաքը հիմնադրման օրից մնում էր զուտ հայկական բնակավայր[2]:

Ընդհանրապէս Իզմիտում Ի. դարի սկզբին գործում էր հայկական 8 դպրոց: Դրանցից մէկը՝ Ազգային մեծ վարժարանը, տալիս էր միջնակարգ կրթութիւն: Պարտիզակում կար հայկական 4 դպրոց, որոնցից մէկը՝ ամերիկեան միսիոներների հիմնած վարժարանը, ապահովում էր միջնակարգ կրթութիւն: Ատաբազարում կար հայկական 5 դպրոց: Դրանց թւում էր միջնակարգ ուսումնական հաստատութիւն համարուող Հայուհեաց դպրոցը՝ հիմնուած ամերիկեան բողոքականների կողմից: Օվաճըգը յայտնի էր Վարդուհեան ազգային վարժարանով, իսկ Արմաշ գիւղը համարւում էր Նիկոմիդիայի մշակութային կարեւոր կենտրոններից մէկը, մասնաւորապէս՝ իր Դպրեվանքով: Այն ունէր տպարան եւ դպրոց: Առնուազն մէկ դպրոց ունէին Նիկոմիդիայի գրեթէ բոլոր հայաշատ գիւղերը՝ Քուրդբելէն (ունէր 2 դպրոց), Օրթագիւղը կամ Միջագիւղը (ունէր 1 դպրոց), Ասլանբեկը, Կէյուէն (Գէյուէն), Խասկալը:

Նիկոմիդիա գաւառում հրատարակւում էին մի շարք պարբերականներ. Իզմիտում՝ «Սուրհանդակը», «Հայրենասէրը», «Բիւթանիան», «Երկիրը», Օվաճըգում՝ «Քնարիկ» թերթը, իսկ Արմաշում՝ «Յոյս» հանդէսը:

«Բիւթանիա» շաբաթաթերթը լոյս է տեսել 1910-1912 թթ. նախ՝ Կ. Պոլսում (1910 թ., թիւ 1), յետոյ՝ Իզմիտում (1910 թ., թիւ 2 - 1911 թ., թիւ 9), ապա՝ Ատաբազարում (1911 թ., թիւ 10 (ապրիլի 20-ից) մինչեւ վերջին համարը): Այն սկզբում տասնօրեայ պարբերականութեամբ էր տպագրւում, իսկ 1911 թուականի թիւ 22-ից մինչեւ հրատարակութեան վերջին շրջանը լոյս էր տեսնում շաբաթը երկու անգամ:

«Բիւթանիան» ազգային-գրական և քաղաքական-տնտեսական շաբաթաթերթ էր: Ծրագրային զեկոյց-խմբագրականում նշւում էր պարբերականի ուղեգիծը: Այն ձգտում էր դառնալ անկողմնակալ մամուլի օրգան, որի շուրջ կը համախմբուէին Նիկոմիդիա գաւառի երիտասարդ մտաւորականները: «Բիւթանիան» ցանկանում էր համախմբել նրանց եւ դառնալ «բեմ մը, ուրկէ անոնք իրենց անկաշկանդ խօսքը կ'ըսեն հասարակական գործերու եւ երեւոյթներու մասին, ըլլալ շրջանի կեանքին եւ առհասարակ աշխատաւոր ժողովուրդի ցաւերուն

1 *Մինաս Գասպարեան, Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ*, Պարտիզակ, 1913, էջ 24:

2 *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1974, հտ. 5, էջ 535:

ու շահերուն անկեղծ արձագանգը»[3]: Տեղական խնդիրներին զուգահեռ՝ պարբերականը պիտի անդրադառնար նաեւ պետական կեանքի կարեւոր հիմնահարցերին: Խմբագրութիւնը հիմնականում կատարել է իր առջեւ դրուած նպատակները՝ վերածուելով հայ ժողովրդին մտահոգող ժամանակի համար առաջնահերթ խնդիրների լուծմանը հետամուտ գաւառաթերթի:

«Բիւթանիայի» պատասխանատու տնօրէնը Յակոբ Ղ. Սարգիսեանն էր, իսկ արտօնատէրը՝ Սիմոն Ղ. Սարգիսեանը: Թերթի խմբագրութիւնը գտնւում էր Իզմիտում, բայց այն կենտրոնատեղեր էր հաստատել Կ. Պոլսում, Իզմիրում, Կալկաթայում, Գատը-Գիւղում: Ունէր գործակալութիւններ Ատաբազարի շրջանում (Ատաբազարում, Սապանճայում, Արմաշում, Խասկալում), Պարտիզակի շրջանում (Պարտիզակում, Տէօնկէլում, Օվաճըգում, Արսլանպեկում), Կէյուէի շրջանում (Կէյուէ-Սթասիոնում, Ագ-Հիսարում, Գուրտպէլէնում, Էշմէում, Միջագիւղում), Գարամուրսալի շրջանում (Մերտեկէօզում, Էալագտերէում), Էալովայի շրջանում (Մեծ Նոր Գիւղում, Միջագիւղում): Հիմնական աշխատակիցներն էին Աշոտ Պազպազեանը, Յակոբ Մելիտոսեանը, Յովհաննէս Փիլիկեանը, Յակոբ Խաչերեանը, Միհրան Փափազեանը, Արշաւիր Բէիսեանը, Թորոս Սոֆեանը, Անդրանիկ Զալգեանը, Կարապետ Զիլեանը, Մանասէ Տօնիկեանը, Յարութիւն Մանթաշեանը, Կարապետ Սեբեթեանը, Յակոբ Քիւֆեճեանը, Աղասի Մկրտչեանը եւ այլք:

«Բիւթանիայի» գաւառային թղթակիցներից էին Ա. Բաչուկեանը (Մերտեկէոզ), Մհերը եւ Օշինը (Գընճըլար), Սի-Սակը (Ատաբազար), Ա. Բասը (Եալակ-Տէրէ), Արագը (Քարցի), Վահան Ժամկոչեանը (Միջագիւղ), Ստուերը եւ Վահանը (Զենկիլէր), Սարորդին (Խաչ-գիւղ), Սուրհանդակը (Ալմալու), Հրայրը (Տէրիննէ), Դարբինը (Արմաշ), Արգոսը (Ֆերիզլի), Գիսակը (Կէյվէ-Էշմէ), Ժանգը (Պարտիզակ), Վաղարշակը (Գլըճ), Քիսակը (Էշմէ) եւ այլք:

«Բիւթանիայի» հիմնական բաժիններն ու խորագրերն անփոփոխ էին ու կայուն: Դրանցից էին՝ «Խմբագրական», «Այժմէութիւններ», «Մեր գաւառը», «Գիւղի ցաւերէն», «Թղթակցութիւններ», «Ազատ թեմ», «Փաստաթղթեր», «Գրական», «Մատենադարան», «Մանրանկարներ», «Ստացուած գրքեր», «Նիկոմիդեան գործեր», «Լրատու», «Շրջանի լուրեր», «Տեղական», «Երկրագործական», «Հողային գրաւումներ», «Առեւտրական կեանք», «Նոթեր ու փոթեր», «Բաց նամակ», «Նամակ խմբագրութեան» եւ այլն:

«Բիւթանիան» չի եղել ՀՅԴ պաշտօնաթերթ, սակայն այն ՀՅԴ ուղղուածութիւն ունեցող պարբերական էր, որը իւրաքանչիւր պատեհ առիթով ներկայացնում էր այդ կուսակցութեան տեսակէտները այս կամ այն հարցի շուրջ, նաեւ անդրադառնում էր ազգային կեանքի տարբեր ոլորտներում ՀՅԴ իրականացրած ծրագրերին: «Բիւթանիան» բանավիճային յօդուածներով հանդէս էր գալիս մասնաւորապէս Հնչակեան կուսակցութեան եւ նրա օրգան «Երկիր» թերթի դէմ՝ քննադատելով հնչակեանների գործելակերպը, մասնաւորապէս՝ Նիկոմիդիա գաւառում: Հրատարակութեան վերջին ամիսներին «Բիւթանիան» հիմնականում քաղաքական թեմաներ էր վերհանում իր էջերում՝ լուսաբանելով օսմանեան խորհրդարանական ընտրութիւնների ընթացքը եւ հայ ժողովրդի դիրքորոշումը իր քուէների տնօրինման կամ բաշխման խնդրում: Թերթի՝ մեր ձեռքի տակ եղած համարները թոյլ են տալիս պնդել, որ հէնց այս շրջանում (1912 թ. վերջին համարներում) «Բիւթանիան» դառնում է անկախ պարբերական եւ վեր է կանգնում կուսակցական շահը պաշտպանելուց: «Բիւթանիան» դէմ է դուրս գալիս

3 «Բիւթանիա», Կ. Պոլիս, 1910, թիւ 1, էջ 1:

բոլոր այն քաղաքական ուժերին (այդ թւում՝ ՀՅԴ-ին), որոնք խորհրդարանական ընտրութիւններում համագործակցում էին Իթթիհատի հետ եւ աջակցում էին կուսակցութեանը նոյնիսկ իրենց հայ թեկնածուներով: «Բիւթանիան» քննադատում էր նաեւ այս ոլորտում ազգային փոքրամասնութիւններին առնչուող հարցերի նկատմամբ իրականացուող պետական այն քաղաքականութիւնը, որի հետեւանքով հայերը իրենց ազգաբնակչութեան թուի համեմատ պատգամաւորներ չէին կարողանում ունենալ խորհրդարանում: Բացի այդ, «Բիւթանիան» բարձրացնում էր մի քանի կարեւոր հարց: Առաջինը վերաբերում էր Ազգային երեսփոխանական ժողովում գաւառահայերի քուէներին: «Այսօր մենք ունինք Ազգ. Երեսփ. Ժողով մը՝ որ իր կազմութեան գրեթէ երեք չորրորդով կը ներկայացնէ Պոլսահայուն ձայնը, եւ հազիւ մէկ չորրորդի տեղ մը տուած է գաւառին: Կա՞յ աւելի ըմբոստացուցիչ անարդարութիւն մը՝ որ գործուի Ազգին համար եւ Ազգին անունով: Այսօր կարելի չէ այլեւս որ Պոլսական ժողով մը՝ ինչպիսին է ներկայիս մեր Երեսփ. Ժողովը, իրեն տայ Ազգային Ժողովի հանգամանք եւ տնօրինէ ամբողջ Հայութեան ճակատագիրը»,- գրում էր «Բիւթանիան»[4]:

Շաբաթաթերթը պահանջում էր վերաքննել ու բարեփոխել Ազգային սահմանադրութիւնը, որը պէտք է սահմաներ հաւասար ներկայացուցչութիւն. «Պէտք է վերջապէս մեր Ազգ. Սահմանադրութիւնը քալէ ԴԷՊԻ ԳԱԻԱՌ: Ազգ. Կեդր. ժողովի մի՛շտ մեծամասնութեան մը անունով խօսող երեսփոխանները թող մտաբերեն անգամ մը որ Գաւառի Հայութիւնը կը կազմէ մեծամասնութիւնը, եւ հետեւաբար իսկական մեծամասնութիւնը կը ներկայացնեն միայն ա՛յն երեսփոխանները, որոնք գաւառահայի ցաւերուն, պէտքերուն ու փափաքներուն թարգմանը կը հանդիսանան»[5]:

«Բիւթանիան» պահանջում էր, որ «գաւառի Հայը Պոլիսի Հայուն հետ հաւասար ձայն ունենայ, որ համեմատական բաշխում կատարուի հայ ազգաբնակչութեան ձայնատուութեան համար»[6]:

«Բիւթանիան» պահանջում էր, որ ժողովուրդն ուղղակի ընտրէր իր երեսփոխաններին, ընդ որում՝ կղերական պատգամաւորները նոյնպէս «ընտրուին ժողովուրդէն եւ ոչ թէ Պոլսոյ կղերէն»[7]: Գաւառաթերթը պահանջում էր, որ հայ կանայք եւս մասնակցեն «ազգային կրօնային-մշակութային բոլոր ձեռնարկներուն մէջ»[8]:

«Բիւթանիայի» միւս պահանջը վերաբերում էր Ազգային սահմանադրութեան աշխարհականացմանը: «Մենք չենք ուզեր մնալ այլեւս իբրեւ կրօնական համայնք մը՝ որպէս դարձուց եւ ճանչցուց մեզ Համիտը, այլ իբր Հայ Ազգութիւն»,- գրում էր գաւառաթերթը[9]: Դրանից բացի, «Բիւթանիան» առաջարկում էր Ազգային սահմանադրութեան մէջ կատարել այնպիսի փոփոխութիւն, որը հնարաւորութիւն կը տար «Հայ Բողոքական եւ Հայ Կաթոլիկ հասարակութիւններէն եւս անհատներ կամ մարմիններ կարենան մասնակցիլ մեր կրթական կամ մշակութային գործերուն մէջ»[10]:

«Բիւթանիան» նշում էր, որ ներկայացուող պահանջները ո՛չ որոշ խմբակի մը պահանջքն են միայն եւ ո՛չ ալ որեւէ թերթի մը. անոնք պահանջքն են ամբողջ գաւառի հայութեան, անոնք հասունացած պահանջքն են այսօր բովանդակ հայ կեանքին, հետեւաբար անկարելի է անտե-

4 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 10, էջ 402:

5 Նոյն տեղում:
6 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 15, էջ 443:
7 Նոյն տեղում:
8 Նոյն տեղում:
9 Նոյն տեղում:
10 Նոյն տեղում:

սել զանոնք, եւ եթէ Պոլիսը կը մնայ ձեռնպահ, Գաւառը պիտի չարժի»[11]:

Խմբագրակազմը համոզուած էր, որ մամուլը հանրային գործերի վրայ մեծ ազդեցութիւն ունէր եւ կարող էր հզօր զէնք լինել ժողովրդին յանուն ազատութեան առաջնորդելու կամ ազատ եւ ինքնավար կեանքով ապրելու համար[12]: Թերթի անցած ուղին եւ որդեգրած քաղաքականութիւնը պարզորոշ երեւում են 1911 թ. դեկտեմբերի 24-ին «Անցնող տարին» խմբագրականից[13]: Թերթը փաստում է, որ Համիդեան բռնապետութեան շրջանում հայերը դժգոհում էին, թէ «ազատութիւն չունինք, ձեռքերնիս կապուած է. բան մը չենք կրնար ընել»: «Բիւթանիան» հարց է տալիս, թէ 1908 թ. յեղաշրջումից յետոյ անցած 4 տարուայ ընթացքում, երբ «ազատութիւն ունէինք, ի՞նչ ըրինք»[14]: Առաջինը խանդավառութեան տարի էր: Կազմուեցին ազգային միութիւններ, որոնք աւելի շատ խօսքով էին բարեկարգում ազգային դպրոցներն ու հաստատութիւններն, ուստի դրանց մեծ մասի անունն իսկ չմնաց դեռ տարին չբոլորած: Երկրորդ տարում ջանքեր են գործադրւում մշակութային հաստատութիւնների բարեկարգման համար, բայց միջկուսակցական պայքարը խանգարում է այդ գործընթացին: 1911 թուականը «Բիւթանիան» համարում է անցման շրջան, երբ կոնկրետ Նիկոմիդիայի գաւառում չենք հանդիպում որեւէ «աչքառու երեւոյթի մը, որ ծառայէր լուսաւորութեան եւ զարգացման, իսկ միութիւնները... գացած են դէպի ետ, դէպի կազմալուծում»[15]: Շաբաթաթերթի կարծիքով՝ միակ դրական երեւոյթը «Բիւթանիայի» խմբագրութեան նախաձեռնութեամբ Ատաբազարում կազմուած Ուսուցչական միութիւնն էր, որի կանոնագիրը, սակայն, չէր վաւերացուել ազգային վարչութիւնների կողմից: Պարբերականն ընթերցողներին առաջարկում էր նոր տարում աշխատել բուռն կերպով, որպէսզի լուծուեն տարբեր բնագաւառներում կուտակուած խնդիրները[16]: Պարբերականը միեւնոյն ժամանակ թերահաւատօրէն է մօտեցել ազգային մարմիններին, քանի որ դրանք գործառոյթները թերի էին կատարում եւ հեռու էին «մամուլին դերը եւ քննադատութեան արժէքը ըմբռնելէ»[17]: Իզմիտի թաղային խորհրդի եւ գաւառային երեսփոխանական ժողովի անդամներին «Բիւթանիան» համարում էր պաշտօնի մուրացկաններ ու կեղծ ազգայինճիներ, որոնց կոչ էր անում լինել բարեխիղճ. «Ձեր ներկայացուցած զանգուածը, որ ազգ կը կոչուի՝ այնպիսի կարիքներ ունի, որոնց արդիւնաւոր լուծումը այս ընթացքով չէ, որ վերջ պիտի գտնայ»[18]: Ազգային մարմինների խոտոր գործելակերպը «Բիւթանիան» պայմանաւորում էր գաւառահայութեան՝ իրենց իրաւունքների չիմացութեամբ եւ ազգային կրթութեան նկատմամբ նրանց կողմից դրսեւորուող անտարբերութեամբ: Հայաշատ Նիկոմիդիա գաւառը լճացած կեանքով էր ապրում: «Տգիտութիւնը, անտարբերութիւնը, անհետաքրքրութիւնը իսպառ կասեցուցած են փտած անիւը մեր գաւառի յառաջադիմութեան: Որպէս զի բուժուի՝ տարիներու ճիգը պէտք է»,- գրում էր «Բիւթանիան»[19]: Թերթի կարծիքով՝ գաւառին այս վիճակից կարող էին հանել կրթօջախներն ու վարժարանները, որոնք, սակայն, նոյնպէս դոփում էին տեղում եւ վերանորոգման կարիք ունէին[20]:

11 Նոյն տեղում:
12 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 2, էջ 2-3:
13 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 32, էջ 533-534:
14 Նոյն տեղում, էջ 533:
15 Նոյն տեղում:
16 Նոյն տեղում:
17 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 3, էջ 1:
18 Նոյն տեղում:
19 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 12, էջ 140:

Ժթ. դարի 60-70-ական թուականներին եւրոպական պետութիւնների ազդեցութեան տակ Թուրքիայում քայլեր են ձեռնարկւում կրթական ոլորտն օրէնսդրօրէն կարգաւորելու եւ բարեփոխելու ուղղութեամբ: Ֆրանսիական օրէնսդրութեան օրինակով արդէն 1869 թ. կեանքի է կոչւում Թուրքիայի կրթական նոր օրէնքը, որի դրոյթներից շատերն այդպէս էլ մնում են գրանցուած միայն թղթի վրայ: Կրթական բարեփոխումների արդիւնքն անբաւարար էր, իսկ Թուրքիայի բնակչութեան մեծամասնութիւնն անգրագէտ էր[21]: Թուրքիայի ազգային փոքրամասնութիւնները (այդ թւում՝ հայերը) օգտւում էին իրենց ազգային դպրոցները ղեկավարելու ինքնավար իրաւունքից: Դա նրանց մօտ բաւական յաջող էր ստացւում: Առաջընթաց էր նկատւում արեւմտահայ կրթօջախներում: 1863 թ. Ազգային սահմանադրութեան հաստատումից յետոյ նոյն թուականին Կ. Պոլսում ընտրուած Ուսումնական խորհուրդը արդասաբեր գործունէութիւն է ծաւալում՝ ծրագրերի մշակման, դասագրքերի ստեղծման եւ դպրոցական ցանցի հաստատման ուղղութեամբ: 1864 թ. Ուսումնական խորհուրդն ընդունում է Ստ. Փափազեանի մշակած ազգային վարժարանների բարեկարգման ընդհանուր կանոնադրութիւնը: Ըստ այդմ՝ հայկական դպրոցներն ունէին 2 կարգ՝ նախակրթական կամ տարրական դպրոց եւ երկրորդական կամ միջնակարգ դպրոց՝ համապատասխանաբար 5-ական տարի ուսուցման ժամկէտով: Մէկ տարի էլ տրամադրւում էր աւարտական քննութիւններին պատրաստուելու համար: Յետագայ տարիներին ուսումնական գործընթացի տեւողութիւնը վերանայւում է՝ կազմելով ընդհանուր թուով 9 տարի: Դպրոցաշինութեանը զարկ է տրւում ողջ ժողովրդի ջանքերով: Յատկապէս ազգային կրթական ընկերութիւնների եւ ազգանուէր անհատների ուժերով հիմնւում են հայկական բազմաթիւ արական եւ իգական դպրոցներ եւ վարժարաններ ոչ միայն Կ. Պոլսում, այլեւ Գաւառում:

Ի. դարի սկզբին Թուրքիայում կար աւելի քան 800 հայկական դպրոց՝ չհաշուած Կ. Պոլսի դպրոցները, որտեղ սովորում էր 82.000 աշակերտ, ի թիւս որոնց՝ 22.000 աղջիկ: Նոյն շրջանում 28 գաւառներում կազմակերպուեցին Ուսումնական խորհուրդներ[22]: Բացի այդ, գործում էին ուսուցիչ-ուսուցչուհիների պատրաստման նպատակով հիմնուած մի քանի վարժապետանոցներ եւ վարժուհինոցներ (օրինակ՝ 1879 թուականին Կ. Պոլսում բացուած վարժուհինոցը կամ 1910 թ. Կարինի Հռիփսիմեան վարժարանին կից գործող վարժուհինոցը, 1886 թուականին Ղալաթիայում հիմնուած Կենտրոնական վարժարանը եւ այլն):

Համեմատաբար բարձրակարգ դպրոցներ (այդ թւում՝ Մխիթարեանների դպրոցներ) էին գործում Նիկոմիդիա գաւառում: Դրանց շարքում աչքի էր ընկնում 1909 թ. Ատաբազարում հիմնուած Կենտրոնական վարժարանը: Ձկայ «Բիւթանիայի» որեւէ համար, որում 2-3 հրապարակում չլինի՝ նուիրուած կրթական հիմնախնդիրներին: Ընդ որում՝ թերթը ոչ միայն վերլուծում էր ոլորտի առջեւ ծառացած խնդիրները, փորձելով գտնել դրանց առաջացման պատճառները եւ լուծման ուղիները, այլեւ իր թղթակիցների միջոցով ամբողջական պատկերացում էր տալիս Նիկոմիդիա գաւառի քաղաքների ու գիւղերի դպրոցներում տիրող իրավիճակի մասին: Այդ թղթակցութիւններն ու վերլուծական յօդուածները զետեղուած են «Մեր Գաւառը», «Պոլիսէն

20 Նոյն տեղում:
21 *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1981, հտ. 6, էջ 770:
22 Նոյն տեղում, էջ 773-774:

դուրս», «Նիկոմիդեան գործեր», «Ակնոցիս տակէն. Ատաբազարեան նոթեր» խորագրերի ներքոյ: «Բիւթանիան» տպագրում էր կրթական հիմնահարցերի շուրջ հասարակութեան ունեցած տարբեր կարծիքներն ու տեսակէտները: Դա հնարաւորութիւն էր ստեղծում հասարակական քննարկումների համար: Այդ ճանապարհով էր, կարծես, թերթն ուզում կրթական որեւէ հարցի համար այնպիսի լուծում գտնել, որը կը գոհացնէր հասարակութեան բոլոր շերտերին: Օրինակ բերենք Ատաբազարի Կենտրոնական վարժարանի կրթական ծրագրի ու մեթոդների, ուսուցիչների որակաւորման եւ վճարման կարգի վերաբերեալ «Բիւթանիայի» էջերում ծաւալուած քննարկումները, թեր եւ դէմ, յաճախ իրարամերժ կարծիքների բախումը, երբ կողմերը փաստերով էին փորձում դիմացինի տեսակէտի սխալ լինելն ապացուցել[23]: Կրթական խնդիրների վերաբերեալ բանավիճային յօդուածները հիմնականում տեղ էին գտնում «Ազատ բեմ» խորագրի ներքոյ: Այս նիւթերը փաստում էին 3 բան: Ներկայացնենք դրանք մէկ առ մէկ:

Նիկոմիդիա գաւառում ազգային դպրոցներն ու վարժարանները մեծ մասամբ բարձիթողի վիճակում էին, իսկ դրանց աշխատակազմին մտահոգում էին ոչ թէ համակարգային խնդիրներն ու դրանց լուծման ուղիների փնտրտուքը, այլ այն, թէ ինչպէս կարգաւորէին իրենց աշխատավարձն ու նիւթական խնդիրները, թէեւ այդ աշխատանքը լիարժէք չէին անում:

Գաւառի կրթօջախների խնդիրների լուծման հարցով զբաղուող ազգային մարմինները, թաղական խորհուրդները լրջօրէն չէին պատկերացնում կրթական խնդիրները ու չէին զբաղւում դրանցով, քանի որ ազգային կրթութիւնը չէին համարում ազգապահպանութեան կարեւոր բաղադրիչ:

Գաւառի հայ ազգաբնակչութիւնը հիմնականում անտարբեր կեցուածք ունէր կրթական հիմնախնդիրների նկատմամբ, ինչը պայմանաւորուած էր բռնազաւթուած հայրենիքում նրանց իրաւազուրկ ու վտանգուած լինելու հանգամանքով:

Կրթական հարցերն ինչ-որ առումով մղուել էին յետին պլան, սակայն գաւառի մտաւորականութեան մի ստուար զանգուած գտնում էր, որ ազգապահպանութեան առումով Թուրքիայում առաջնահերթ էին կրթական խնդիրները լուծելը եւ դրանք համայնքի ուշադրութեան կենտրոնում պահելը: Այս առումով առաջամարտիկ կարելի է համարել «Բիւթանիա» թերթը, որն իրեն համարում էր Նիկոմիդիայի խնդիրներն օբիեկտիւօրէն ներկայացնող պարբերական[24]: «Բիւթանիան» համոզուած էր, որ միայն հոգեւոր վերածնունդը եւ կրօնական խնդիրների լուծումը կարող էին նպաստել ազգապահպանութեանը. «Հա՛րկ է ուժգին փարումով մը վերածնցնել մեր կրթական վայրահակ գործունէութիւնը՝ ուրկէ պիտի բղխին արեւափայլ խարտեաշ գլուխներով խիզախ սերունդներ, որ գէթ կարող ըլլային մեր թողած աւերներուն վրայ արշալոյսներ եւ ծաղիկներ բողբոջեցնել»[25]:

Կրթական ոլորտի բարեփոխումներին նպաստելու նպատակով «Բիւթանիան» հիմնականում թղթակցութիւնների միջոցով ներկայացնում էր որեւէ քաղաքի կամ դպրոցի ձեռքբերումները կամ բացթողումները:

Թերթը գոհացուցիչ էր համարում, ասենք՝ Պարտիզակի[26] կամ Մերտեկէօղի[27] վարժարանների վիճակը, բայց քննադատում էր Օվաճըգի դպրոցների անբարեկարգ ու անխնամ վիճակը[28]: «Օվաճըգին գինետուն ունենալը գիտեմ, սակայն կրթական ըսուածը ուրիշին հարցուցէք: Օվաճըգը նախ թող իր վարժարան-շէնքն ունենայ: Եւ չունի: Դպրոցը չորս սիւնին վրայ կեցած՝ բանջարանոցի խրտուիլակի պէս հովերուն դէմ կը դողդողայ: Փարայ չկայ, որ աւարտի: Օվաճըգցին դրամ չի տար, այլ կ'ըսէ. «Եթէ տալու ըլլամ, այս իրիկուն գինիիս փարան ո՞վ պիտի տայ»: Ամօ՛թ: Իր հո՞գն է, թէ զաւակը կը սորուի կամ չի սորուիր, իր ինչո՞ւն պէտք է, թէ վարժարանը կը վերաշինեն եղեր: Ի՞նչ ըսել է վարժարան, գինիի մը տեսա՞կն է արդեօք: Վա՜խ, օվաճըգցիներ, ձեր տգիտութեամբ սպանեցիք գիւղն ու իր նոր սերունդը»,- գրում էր «Բիւթանիան»[29]: Թերթը դիմում էր օվաճըգցիներին, որոնց աղջիկներն ու կանայք չգիտէին հայերէն տառերը, որ նրանք ուշքի գան եւ երեխաներին տան հայեցի դաստիարակութիւն: Միայն այդ ճանապարհով նրանք եւ նրանց նմանները կը կարողանային արդարացնել իրենց ապրելու իրաւունքը[30]:

«Բիւթանիան» արձանագրում էր այն փաստը, որ թէեւ Նիկոմիդիա գաւառի հայաբնակ գիւղերից իւրաքանչիւրում կար դպրոց, բայց դրանցից շատերը գրեթէ «անգործածելի եւ բոլորովին անյարմար» էին[31]: Այդ կրթօջախների ուսումնական ծրագրերը մեծ մասամբ կախուած էին ուսուցիչների քմահաճոյքից կամ նախասիրութիւններից: Ընդ որում՝ ուսուցիչները հիմնականում աւարտել էին նախակրթարաններ եւ իրենց աշխատանքը կազմակերպում էին՝ անգամ իրենց ձեռքի տակ չունենալով Ուսումնական կրթական խորհրդի ծրագիրը: Դժուար էր գտնել պատրաստուած ուսուցիչներ գիւղական դպրոցների համար, որովհետեւ չնչին էր նրանց աշխատավարձը (տարեկան 20-25 ոսկի): Թերթը մատնանշում էր 2 պատճառ, որոնք քայքայման էին հասցրել գիւղական դպրոցները. դպրոցների աղքատիկ բիւջէն, գործին քաջատեղեակ ուսուցչական կադրերի պակասը:

Իրավիճակը շտկելու նպատակով «Բիւթանիայի» խմբագրութիւնը Նիկոմիդիա գաւառի Ուսումնական կենտրոնական խորհրդին առաջարկում էր նախ՝ մշակել գիւղական դպրոցների համար յատուկ ուսումնական ծրագիր, ապա՝ դպրոցներին ապահովել այդ ծրագրի համեմատ դասաւանդել կարողացող ուսուցիչներով: Բացի այդ, գիւղերի ազգային մարմինները պիտի աշխատանք տանէին ազգաբնակչութեան շրջանում, որ նրանք ուսուցիչների աշխատավարձի համար տարեկան յատկացնէին առնուազն 36 ոսկի: Բաւարար աշխատավարձի դէպքում միայն ուսուցիչները չէին լքի գիւղական դպրոցները[32]: «Ուսուցիչները պէտք չէ ըլլան ու նկատուին միայն դասախօսներ: Անոնք իրենց կեանքովն ու համոզումներովը պէտք է ըլլան տիպար. շինելու համար աշակերտութիւնը: Թող չըսուի, թէ չունինք պէտք եղած ուժերը. ունինք եւ կը կարծենք՝ բաւականին չափ: Հարկ է փնտռել եւ օգտագործել: Երբ ձեռք կը բերուին, ճանչնալ ու գնահատել»,- գրում էր թերթը[33]:

Կրթական խնդիրների լուծմամբ շահագրգիռ ատաբազարցի մի խումբ երիտասարդներ բարձրացնում են կրթաթոշակը կրթական տուրքով փոխարինելու հարցը: «Բիւթանիան» պաշտպանում է այդ առաջարկը: Թերթը գտնում էր, որ կարելի էր հաստատել ազգային ընդհանուր տուրք, որը պիտի բաշխուէր «իւրաքանչիւր տու-

23 «Բիւթանիա», Իզմիտ, 1910, թիւ 3, էջ 2-3. 1910, թիւ 4, էջ 39-40. 1910, թիւ 9, էջ 93. 1910, թիւ 5, էջ 55:

24 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 8, էջ 85:

25 Նոյն տեղում, էջ 86:

26 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 14, էջ 161:

27 Նոյն տեղում, էջ 164:

28 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 15, էջ 171:

29 Նոյն տեղում:

30 Նոյն տեղում, էջ 172:

31 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 24, էջ 503:

32 Նոյն տեղում, էջ 504:

33 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 18-19, էջ 474:

նի վրայ, անոնց կարողութեան համեմատութիւններով եւ որոշ աստիճանով»[34]:

Յօդուածագիր Աշոտ Պազպազեանի կարծիքով՝ այս առաջարկի շնորհիւ հնարաւոր էր իրականացնել ձրի եւ պարտադիր ուսուցման գաղափարը[35]: Ձրի եւ պարտադիր ուսուցման ծրագիրը հնարաւորութիւն կը տար դպրոցներում ընդգրկել նաեւ աղքատ ընտանիքների զաւակներին, որոնցից շատերն արդէն 10-12 տարեկանում կա՛մ համալրում էին փողոցային մուրացկանների շարքերը, կա՛մ ենթարկւում էին աշխատանքային շահագործման որեւէ արհեստաւորի մօտ[36]: Արդէն 1910 թ. թիւ 23-ում «Բիւթանիան» յայտնում է, որ հայ ուսուցիչների շրջանում սկսուել է շարժում՝ ուսուցչական ընկերակցութիւն ստեղծելու նպատակով[37]: Իսկ 1911 թ. մայիսի 10-ի խմբագրականում «Բիւթանիան» կոչով դիմում է ուսուցիչներին, որ քննարկեն եւ կազմեն Ուսուցչական միութիւն[38]: Այդ միութեան կորիզը պիտի լինէին գաւառի գլխաւոր 2 կենտրոնների՝ Պարտիզակի եւ Ատաբազարի վարժարանների «հոյլ մը պատուական ուսուցիչները, որոնք թէ՛ գաւառին եւ թէ՛ շրջանակներուն մէջ գնահատելի անձնուիրութիւնով կ՚աշխատին»[39]: Թերթի կոչին անմիջապէս արձագանքում են 27 ուսուցիչ-ուսուցչուհիներ: 1911 թ. մայիսի 15-ին Ատաբազարի Արամեան վարժարանի սրահում տեղի է ունենում քաղաքի Ուսուցչական միութեան խորհրդակցական առաջին ժողովը, որն ընտրում է դիւան եւ յանձնախումբ: Վերջինը մշակում եւ ուսուցիչներին է ուղարկում միութեան կանոնագիրը եւ ընդհանուր ժողով գումարելու հրաւէրը[40]: Ատաբազարի Ուսուցչական միութիւնը արագ տեմպերով վերածւում է գործող մարմնի: Այն պարբերաբար ուսուցիչների համար կազմակերպում էր մանկավարժական դասընթացներ, որոնց ժամանակ աւանդ ունեցող ուսուցիչները հանդէս էին գալիս դասախօսութիւններով եւ գործնական աշակցութիւն էին ցուցաբերում դրական փորձի փոխանցման առումով[41]: Քննարկւում էին դպրոցների կրթական ծրագրերն ու դասաւանդման մեթոդները: «Բիւթանիան» խմբագրականների միջոցով ներկայացնում էր Ուսուցչական միութեան կողմից բարձրացուող պահանջները: Ուսուցիչները պահանջում էին մշակել կրթական միօրինակ ծրագիր բոլոր նախակրթարանների համար. «Ատաբազարի բոլոր թաղային նախակրթարանները թէ՛ դասագիրքերու, թէ՛ դասաւանդութեան ընդհանուր ուղղութեան տեսակէտով պէտք է ըլլան միօրինակ, այնպէս որ նախակրթարաններու Միջին Բ. կարգերէն ետք, Բարձրագոյն Ա. կարգերը համապատասխանեն Կեդր. Վարժարանի Ա. դասարանին»[42]: Պահանջում էին նաեւ միօրինակ դարձնել աշակերտների տարիքը իւրաքանչիւր կարգի համար: Այդ ձեւով կը կարողանային պետական վարժարանների ծրագրին զուգընթաց կազմակերպել ուսումնական գործընթացը: Ուսուցիչներն առաջարկում էին միացնել թաղային նախակրթարանների բիւջէն[43]: Կրթական ծրագրերի բարեփոխումը, «Բիւթանիայի» կարծիքով, պէտք է իրականացուէր կրթական աշխարհականացման ճանապարհով՝ դրանք զերծ պահելով կղերական մթնոլորտից եւ ոգուց[44]:

34 Նոյն տեղում, Կ. Պոլիս, 1910, թիւ 1, էջ 2:
35 Նոյն տեղում:
36 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 3, էջ 2:
37 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 23, էջ 244:
38 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 12, էջ 418:
39 Նոյն տեղում:
40 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 13, էջ 429:
41 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 18-19, էջ 476-477:
42 Նոյն տեղում, Ատաբազար, 1911 թիւ 14, էջ 433:
43 Նոյն տեղում, էջ 433-434:
44 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 18, էջ 206:

«Բիւթանիան» անդրադարձել է նաեւ իգական սեռի կրթութեան եւ դաստիարակութեան խնդիրներին: Խմբագրութիւնը շեշտում էր «իգական սեռին համար բարձրագոյն կրթութեան մը» անհրաժեշտութիւնը[45]: Այդ նպատակով առաջարկում էր գոնէ Ատաբազարում հիմնել «աղջկանց Երկրորդական կամ Կեդրոնական վարժարան մը»[46]:

«Բիւթանիան» կոչ էր անում քաղաքի կանանց համախմբել իրենց ուժերը եւ ստեղծել այնպիսի կրթասիրաց միութիւն, որը կը ֆինանսաւորէր իգական սեռի համար բացուելիք կենտրոնական վարժարանը[47], քանի որ մինչ այդ 1909 թ. գործող նմանատիպ միութիւնը դրական ոչինչ չէր արել[48]: 1910 թ. Նիկոմիդիայի գաւառում արդէն գործում էին կանանց մի շարք միութիւններ (օրինակ՝ Ատաբազարի եւ Պարտիզակի Լսարանական միութիւնները, Պարտիզակի եւ Իզմիտի Կարմիր խաչի ընկերակցութիւնները եւ Եկեղեցասիրաց յանձնախմբերը, Ատաբազարի Ս. Կարապետ թաղի Կանանց դպրոցասիրաց եւ Ս. Հրեշտակապետի թաղի Սանուշեաց միութիւնները եւ այլն)[49]: «Բիւթանիան» գտնում էր, որ իրենց իրաւունքների պաշտպանութեան համար կանայք առաջին հերթին պիտի կիրթ լինէին: Այդ գործում նրանց պիտի օգնէին կրթական միութիւնները[50]: «Կան մայրեր, որ կը յայտարարեն, թէ իգական սեռը պէտք չունի բարձր դաստիարակութեան մը: Կան, որ կը կոչեն, թէ կինը չէ կրնար մարսել բարձր ուսումներ, չի կրնար մտաւոր ծանր աշխատանք վերցնել, հետեւաբար պէտք չունի մտաւոր լայն զարգացումի: Եւ սակայն այդ տրամաբանութենէն աւելի անտրամաբանական բան չկայ: Ինչպէս արու անհատ մը իրաւունք ունի կրթուելու, զարգանալու, աղջիկն ալ նոյնքան իրաւունք ունի յառաջադիմելու, զարգանալու»,- գրում էր «Բիւթանիան»[51]: Իգական սեռի դաստիարակութեան եւ կրթութեան աւագ կարեւորութիւնը պարբերականը հիմնաւորում էր այն հանգամանքով, որ կանայք դաստիարակում են աճող սերնդին: Այնպէս որ, ցանկացած ազգի առաջադիմութիւնը կախուած է մայրերի կամ կանանց կրթութիւնից: Միեւնոյն ժամանակ շաբաթաթերթը փաստեր էր վկայակոչում առ այն, որ մի շարք գիւղերի ղեկավար մարմինները չէին կարող գիւղացիներին բացատրել աղջիկների կրթութեան ու դաստիարակութեան անհրաժեշտութիւնը: Օրինակ՝ 250 տուն ունեցող Մերտեկէօզի բնակիչները չէին ցանկանում տարեթոշակի գումար յատկացնել 85-90 աղջկայ համար մէկ վարժուհի ունենալու նպատակով: Բնական է, որ այդ պատճառով փակուել էր գիւղի աղջիկների նախակրթարանը[52]: Յիշատակենք եւս մէկ փաստ: Պարբերականի հրապարակումներից պարզ է դառնում, որ մէկ տարուց աւելի էր, ինչ Նիկոմիդիայի կրթասէր հասարակութեան կողմից յատկացուած գումարները չէին ծառայում իրենց նպատակին. չէր կառուցւում Ազգային երկսեռ վարժարանի շէնքը[53]: «Բիւթանիան», սակայն, բերում էր նաեւ յաջողութիւնների հասած իգական վարժարանների օրինակներ: Օրինակ՝ Ատաբազարի Հայուհեաց վարժարանը համարում էր առողջ պատուաւոր հայ աղջիկների դաստիարակութեան գործի մէջ: «Բիւթանիան» յիշատակում էր այն փաս-

45 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 14, էջ 433:
46 Նոյն տեղում:
47 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 13, էջ 426:
48 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 2, էջ 10, 1910, թիւ 7, էջ 81:
49 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 13, էջ 425:
50 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 16, էջ 451:
51 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 20-21, էջ 486:
52 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 19, էջ 225:
53 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 14, էջ 164:

տը, որ 1909 թ. Ադանայի կոտորածից մազապուրծ հայ որբերն ու որբուհիները հացի հետ գիրք էին խնդրում իրենց օգնութիւն բաժանող Զապէլ Եսայեանից եւ տիկին Թէոդիկից[54]: Ըստ «Բիւթանիայի»՝ կանանց մէջ է յատկապէս դրսեւորւում մեր ազգային ոգին. «Հայը արիւնահեղութեան հետեւեալ օրն իսկ կը շարունակէ անողոքօրէն ընդհատել տրուած իր ճամբան»[55]:

Մինչեւ վերջին համարը «Բիւթանիան» շարունակում էր անդրադառնալ կրթական հիմնախնդիրներին՝ լուսաբանելով Նիկոմիդիա գաւառի կրթական ոլորտում տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւնները:

1912 թուականին թերթն աւելի շատ քաղաքական հովերով էր տարուած եւ փորձում էր իր հրապարակումներով արտայայտել ՀՅԴ տեսակէտները այդ տարի անցկացուելիք օսմանեան խորհրդարանական ընտրութիւններում հայ երեսփոխանների ընդգրկուածութեան աստիճանի, Թուրքիայի Ազգային ժողովում հայ պատգամաւորների ունեցած տեղի, դերի եւ յարակից հարցերի վերաբերեալ: «Բիւթանիայի» հրապարակումները վկայում են, սակայն, որ թերթի խմբագրական կազմի «տկարութեան», գործակալների եւ բաժանորդների անփութութեան հետեւանքով պարբերականի կրած նիւթական դժուարութիւնները, տպագրութեան ծանր պայմանները թոյլ չէին տալիս, որ «Բիւթանիան» լիարժէք իրականացնի իր ծրագրերը[56]. «Գաւառով եւ գաւառի համար» նշանաբանով էր առաջնորդւում «Բիւթանիան» եւ անում էր այն, «ինչ որ կարելի էր, թելադրում՝ ինչ որ օգտակար էր, եւ մատնանիշ էր անում՝ ինչ որ կեղծ էր եւ վնասակար»[57]: Հայ ժողովուրդը պարտաւոր էր անել նոր քայլ՝ լուծելու համար իր առջեւ ծառացած խնդիրները, ի թիւս որոնց մասնաւորապէս՝ կրթական հիմնահարցերը: Հայը կա՛մ պիտի կործանուէր, կա՛մ քայլէր առաջ: «Ուրիշները սկսած են շարժիլ ու դիմել առաջ. պէտք է շարժինք ե՛ւ մենք. ժամանակը եկած անցած իսկ է»,- համոզուած պնդում էր «Բիւթանիան»[58]:

«Բիւթանիա» շաբաթաթերթը անմասն չէր գրական-մշակութային անցուդարձից: Թէեւ պարբերականի «գրական բաժինը» ոչ բոլոր համարներում կար, բայց «Բիւթանիայի» էջերում գրեթէ մէկ բանաստեղծութիւն մշտապէս գտնում էր իր տեղը: Այստեղ Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Շահան Նաթալիի, Յակոբ Սիրունու, Վահան Թօթովենցի, Լեւոն Էսաջանեանի, Հրանտ Նազարեանցի, Ատրուշանի բանաստեղծութիւնների կողքին կարող ենք գտնել գաւառահայ ոչ այնքան յայտնի բանաստեղծների, ի թիւս որոնց՝ Արտեմ Շահնուրի, Զարեհ Բլբուլի, Խաչիկ Գաւալճեանի, Ղ. Մելոյեանի, Հրացայտի, Մշակի, Վրոյրի, Էս-Սէ-ի եւ այլոց ոտանաւորները: «Գրական բաժնում» զետեղւում էին նաեւ պատմուածքներ ու նովելներ (հիմնականում գաւառահայ արձակագիրներ, օրինակ՝ Սուրէն Միսքաճեանի (Սրենց), Բ. Ազրայէլի, Մերկաթիի, Մելքոն Յովսեփեանի):

Գրական-մշակութային կեանքը այնքան էլ չի հետաքրքրել շաբաթաթերթի խմբագրակազմին: Այս գրական քաղաքականութիւնն առաւել ցայտուն է դրսեւորուել 1912 թ. օսմանեան խորհրդարանական ընտրութիւնների շրջանում, երբ պարբերականը հիմնականում ունէր քաղաքական ուղղուածութիւն: Իսկ ընդհանրապէս «Բիւթանիան» միայն ընդհանուր պատկերացում է փորձել տալ Նիկոմիդիայում տիրող մշակութային մթնոլորտի եւ այս ոլորտի անցուդարձի մասին: Ասենք՝ «Մատենադարան» եւ «Ստացուած գրքեր» բաժին-

54 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 10, էջ 109:
55 Նոյն տեղում:
56 Նոյն տեղում, Իզմիտ, 1911, թիւ 1, էջ 325:
57 Նոյն տեղում:
58 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 15, էջ 433:

ներում լուրեր էին տպագրւում նոր լոյս տեսած պարբերականների մասին: Յաճախ այդ լրատուութիւնը գովազդային բնոյթ ունէր. խմբագրութիւնը խորհուրդ էր տալիս գնել այս կամ այն գիրքը կամ պարբերականը՝ նշելով դրանց գինը եւ հասցէները, որտեղից կարող էին ձեռք բերել: Օրինակ՝ 1910 թ. 7-րդ համարում լուր կար այն մասին, որ լոյս էր տեսել Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածոն. «Ճոխ հատոր մը. Օ. Արզուման մաքուր տպագրութեամբ՝ փայլուն թուղթի վրայ: Հատորը բաժնուած է երեք մասերու, Բագինին վրայ, Կրկէսին մէջ, Դիւցազնավէպեր, եւ կը պարունակէ 42 քերթուածներ ու բանաստեղծութիւններ: Գինն է 9 ղրուշ: Կեդրոնատեղի «Արծիւ» գրախանութ, Մարբուճճըլար, 22»[59]: Կամ «Բիւթանիան» ընթերցողներին տեղեկացնում էր, որ Ա. Պիպեռճեանի աշխատասիրութեամբ հրատարակուել է «Ճաշակ արդի հայ մատենագրութեան» երկհատորեակը՝ իւրաքանչիւրը 450 էջով: Դրանցում զետեղուած էին ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի արեւելահայ ու արեւմտահայ գրողներից արձակ եւ չափածոյ ստեղծագործութիւններ, գրական ծանօթութիւններ եւ կենսագրական տեղեկութիւններ: «Այս հատորը կը ծախուի 10 ղրշի, հակառակ իր ծաւալին ու մաքուր տպագրութեան - շատ աժան գնով: Կեդրոնատեղին է հեղինակին քով, Պապը-Ալի Ճատտէսի թիւ 12»,- գրում էր «Բիւթանիան»[60]:

Գրական ստեղծագործութիւնների արժէք են ներկայացնում «Ակնոցիս տակէն» շարքում Սուրէն Սրենցի եւ «Մանրանկարներ» շարքում Կռողի երգիծական դիմանկարային նովելները Նիկոմիդիայի «Ազգային ջոջերի» մասին: Դրանցից մէկում Ս. Սրենցը ծաղրում էր Ատաբազարում յայտնի մեծահարուստ Դիոկղետիանոս աղային, ով «ամէն առտու եւ իրիկուն ֆալախայ կը քաշէ իր խիղճին, որպէս զի լուռ կենայ»[61]:

Նիկոմիդիայի մշակութային կեանքն այնքան էլ յագեցած չէր միջոցառումներով: Եղածները եւ կազմակերպուող միջոցառումները (դպրոցների, վարժարանների ու մանկապարտէզների տարեվերջեան հանդէսներ, կուսակցութիւնների կողմից անցկացուող բանախօսութիւններ, համերգներ) լուսաբանւում էին «Բիւթանիայի» թղթակիցների կողմից: Օրինակ՝ լուր կար այն մասին, որ Իզմիտում մէկ ամիս շարունակ թաղապետական պարտէզում հանդէս էր եկել ամերիկեան կրկէսի 30-հոգանոց երկսեռ խումբը. «Ուրախ ենք, որ քաղաքիս միօրինակ կեանքը գոնէ ժամանակի մը համար այս խումբին շնորհիւ կը ստանայ անօրինակ կենդանութիւն մը: Գիները կը կազմեն 3-5-10 ղուրուշ, ինչ որ ամէն քսակի ալ մատչելի է»[62]: 1911 թ. մարտի 29-ին Ատաբազարում մի քանի ներկայացում տալուց յետոյ Իզմիտ է ժամանում Հայ դրամատիկ թատերախումբը, որի ներկայացումներին մասնակցում էին նաեւ Վահրամ Փափազեանն ու Ենովք Շահէնը: Իզմիտից յետոյ նրանք մեկնում են Կ. Պոլիս: Այս լուրին «Բիւթանիան» կցում է «Թէաթրո» իտալական թերթից Վ. Փափազեանին նուիրուած յօդուածի թարգմանութիւնը, որտեղ ամփոփուած էին օտարազգի նշանաւոր թատերագիրների կարծիքները Հայ դրամատիկ թատերախումբի «լուսաւոր աստղի» մասին[63]:

Թատերական աշխարհի անցուդարձին էր պարբերաբար անդրադառնում Հեթանոսը: Վերլուծական նիւթերից կարելի է առանձնացնել Հ. Պուլուտեանի «Կորադոն ի պատիւ մամուլին» յօդուածը: Հեղինակն անդրադառնում է Իզմիտում Յ. Աբէլեանի «Զարիֆեան» թատերախմբի «Օթելլո»

59 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 7, էջ 74:
60 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 9, էջ 07:
61 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 6, էջ 65:
62 Նոյն տեղում, Իզմիտ, 1911, թիւ 9, էջ 398:
63 Նոյն տեղում:

ներկայացմանը, որի աւարտին Աբէլեանը հանդիսատեսին խոստանում է կրկին ներկայացումներ տալ այդտեղ՝ Պարտիզակում հիւրախաղերով հանդէս գալուց յետոյ: Նա դա անելու էր ի պատիւ «Բիւթանիա» շաբաթաթերթի՝ որպէս «քաջալերութեան առհաւատչեայ մը ըլլալու համար գաւառական մամուլին»[64]: Յօդուածագիրը նաեւ յիշատակում է Իզմիտում լոյս տեսած առաջին հայկական պարբերականը՝ «Հայրենասէրը»: Այն լոյս էր տեսել 1850-1853 թթ. Իզմիտում յայտնի Մուրադ վարժապետի աւագ որդու՝ Աբրահամ Մուրադեանի ջանքերով սկզբում իբրեւ շաբաթաթերթ, յետոյ՝ երկշաբաթաթերթ: «Խորհեցայ այն 17-18 տարեկան պատանիին ձեռներէցութեան, կորովին եւ աշխատասիրութեան վրայ, որ տպարանական արհեստին շատ անկատար կերպով տեղեակ, ինքն էր ոչ միայն խմբագիրը, այլեւ գրաշարը, տպագրիչը իր սիրական թերթին. այդ ամէն աշխատութիւնք իր ձեռքով միայն կը կատարուէին համեստ եւ աղքատ իր բնակարանին մէջ»[65]:

«Բիւթանիան» մի քանի խմբագրական է նուիրել արուեստի զարգացման խնդիրներին: Դրանցից առանձնացնենք Նորայրի «Քննադատութիւնը» վերնագրով եռագրութիւնը: Հեղինակը կարեւորում է առողջ քննադատութեան դերը մշակոյթի առաջընթացի մէջ: Մասնաւորապէս նա անդրադառնում է գաւառում սկսուած գրական-մշակութային շարժմանը. «Գաւառը պիտի արտադրէ այն բոլոր տարրերը՝ որ հարկաւոր են ստեղծելու համար ինքնուրոյն հայ կեանք մը՝ մամուլով, դպրոցով, գեղարուեստով, գրականութիւնով»[66]: Գաւառահայ մշակութային շարժման լաւագոյն դրսեւորումը հեղինակը համարում է Ատաբազարի «Ադամեան» սիրողական թատերախմբի գործունէութիւնը: Այստեղ համախմբուած էր գաւառական բեմի վրայ առաջին անգամ հանդէս եկող երկսեռ դերասանական խումբ[67]: Դերասաններից շատերին Նորայրը տաղանդաւոր եւ խոստումնալից էր համարում[68] (Զարեհ Բլբուլ, Գրիգոր Տատուրեան): Այս թատերախումբը ներկայացրել էր Ղ. Մելոյեանի «Անառակ որդին» դրաման: Ղ. Մելոյեանը Ատաբազարի Կեդրոնական վարժարանի աւագ ուսուցիչ էր. «Գաւառի հարազատ զաւակն է եւ մէկը այն սակաւաթիւներէն, որ նորաստեղծ հայ գրականութեան մէջ կը բերէ հայկական հզօր գրականութեան մը ատաղձները, եւ որուն արդարեւ վիճակուած է փառաւոր տեղ մը մեր գրական կրկէսին մէջ, եթէ իր աշխատութիւնները շարունակէ այն թափով՝ որով որ արդէն սկսած ու արտադրած է այնքա՛ն գեղեցիկ ու հուժկու պատկերներ, ինչպէս եւ իր Հողի մարդիկը, Դաւաճան կինը, Մարդիկ արածում են»[69]:

Գրաքննադատական յօդուածների շարքում ուշագրաւ է Դ. Վարուժանի «Պատգամաւորներ» ստեղծագործութեան առիթով Մելքոն Յովսեփեանի գրած յօդուածը: «Գեղեցկագէտ բանաստեղծի իր հոյակապ քերթուածներէն կը բուրէ իր ցեղակիցներուն արիւնին հոտը. Ու հերոսութիւնները տակաւին, որոնք գեղեցիկ ու լուսատու փարոսներ են, որոնց՝ բանաստեղծը յառի՛լ կը ստիպէ ներկայ թշուառացած իր եղբայրները, աներկեւան մնալու համար բոլոր մրրիկներուն մէջ, որպէս զի հակառակ բոլոր չարաղէտ դէպքերուն՝ ցեղին հոգիին մէջ չմեռնի ապրելու իղձը եւ նորանոր յոյսերու կառչած՝ ուժգնօրէն ցցուի եւ վազէ դէպի նպատակը, դէպի Ազատութիւն»,- գրում էր հեղինակը[70]: Այս կտրուածքով վերլուծելով Դ. Վարուժանի

64 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 10, էջ 117:
65 Նոյն տեղում:
66 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 15, էջ 166:
67 Նոյն տեղում:
68 Նոյն տեղում, էջ 165:
69 Նոյն տեղում, էջ 166:
70 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 18, էջ 207:

պոէզիան՝ Մելքոն Յովսեփեանը զուգահեռներ էր անցկացնում նրա եւ Աւետիս Ահարոնեանի միջեւ:

«Բիւթանիան» անմասն չէր մնում գրական կարեւոր համաշխարհային իրադարձութիւններին եւ անդրադառնում էր դրանց լուրերի, թղթակցութեան, յօդուածի տեսքով: Յիշատակենք 1910 թ. յուլիսի 5-ը, երբ լրացաւ անուանի հայագէտ, խմբագիր, բանաստեղծ Գրիգոր Բալասանեանի գրական գործունէութեան 50-ամեակը: «Բիւթանիան» լուսաբանում է այդ յոբելեանական իրադարձութիւնը՝ նախապէս գրախօսականներ գրելով Գր. Բալասանեանի գրական վաստակի մասին: Այդ յօդուածների թւում իւրայատուկ ամփոփիչ ուսումնասիրութիւն է Վիեննայում տեղի ունենալիք յոբելեանական հանդիսութիւնների կազմակերպող յանձնաժողովի նախագահ Է. Դաւթեանի յօդուածը[71]:

Գրական անդաստանում ողջունելի ծնունդ էր Բոստոնում Շ. Նաթալիի «Շանթ» հանդէսի հրատարակութիւնը, որին բաժանորդագրուելու պայմաններն էր իր ընթերցողներին ներկայացնում էր «Բիւթանիա» շաբաթաթերթը[72]: «Բիւթանիան» ընթերցողներին տեղեկացնում է մէկ այլ յիշարժան երեւոյթի՝ հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի կապակցութեամբ լոյս տեսած քառահատոր «Յիշատակարանի» առաջին հատորի մասին, որտեղ ամփոփուած էին հայ 55 երեւելի անձանց կենսագրականներ, լուսանկարներ, ձեռագրեր եւ այլն: Այն ստանալու համար «դիմել խմբագրութեանս եւ կամ հրատարակիչներուն. Կ. Պոլիս, Վ. Պ. Զարդարեան Գրատուն, Զագմագճըլար թիւ 24-25»[73]: «Բիւթանիան» ազգային տօն է համարում Վարդանանց պատերազմը, որին նուիրուած Օ. Շահինեանի «Քաջ Վարդան Մամիկոնեան կամ Աւարայրի արծիւը» ներկայացման ազդն է տեղադրում վերջին էջում ամբողջութեամբ: Այն պիտի ներկայացուէր Իզմիտի Ազգային թատրոնում «մեծաշուք հանդիսաւորութեամբ» 1911 թ. փետրուարի 21-ին. «Կը վայելէ որպէս զի ամէն հայ անձամբ գայ եւ տեսնէ այս պատմական ողբերգութիւնը՝ նիւթական համեստ զոհաբերութեան մը փոխարէն»,- գրում էր «Բիւթանիան»[74]:

Համամարդկային գրական-մշակութային մեծութիւններին նոյնպէս առիթների դէպքում անդրադարձել է «Բիւթանիան»: Օրինակ բերենք Ու. Զերքեզովի յօդուածը Լ. Տոլստոյի մահուան առիթով[75]:

«Բիւթանիայի» համար կարեւոր էին գրական իսկական արժէքները: Պատահական չէ, որ շաբաթաթերթն իր թերթօնում տպագրել է թուրք հանրաճանաչ բանաստեղծ Նամըգ Քէմալի «Երազ» վիպակը՝ թուրքագէտ Ս. Թապագեանի հայերէն թարգմանութեամբ: «Նամըգ Քէմալ թուրք գրագէտ-բանաստեղծներուն մէջ ամենէն մեծը, ամենէն մաքուրը, միեւնոյն ատեն ամենէն ժողովրդականը եւ գրական վերանորոգման պարագլուխներուն ամենէն կորովին եղած է»,- գրում էր Ս. Թապագեանը առաջաբանում[76]:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ մշակութային, տնտեսական կամ ընդհանուր առմամբ ազգային կեանքի առաջընթացը «Բիւթանիան» կապում էր Հայկական հարցի լուծման կամ Թուրքիայում ազգային հիմնահարցերը սահմանադրական ճանապարհով լուծելու հետ. չէ՞ որ հայ ժողովուրդը բոլոր բնագաւառներում ունէր տաղանդաւոր, ազգասէր ու իրենց գործին նուիրեալ զաւակներ, որոնք նպաստաւոր պայմաններում ի զօրու էին ստեղծել համամարդկային արժէքներ, ի

71 Նոյն տեղում, էջ 212:
72 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 26, էջ 280:
73 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 27, էջ 300:
74 Նոյն տեղում, Իզմիտ, 1911, թիւ 6, էջ 380:
75 Նոյն տեղում, Իզմիտ, 1911, թիւ 1, էջ 330:
76 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 18, էջ 210:

զօրու էին չէնացնել ու հզօրացնել սեփական հայրենիքն ու երկիրը: Գրականութեան ասպարէզում, օրինակ, «Սիամանթօ, Դ. Վարուժան, Զարդարեան, Ահարոնեան, Սուրէն Պարթեւեան, «Ազդակն» ու իր նորահաւատ ու նորօրինակ առաքեալները եւ ուրիշ մէկ քանի ճշմարի՛տ կոչուածներ՝ իրենց տաճարակրուած տաղանդներով եկան աստղահիւսել մեր գրական նոր դարաշրջանը (époque)»[77]: Գրականութեան եւ մշակոյթի առաջընթացին նպաստելու նպատակով «Բիւթանիան» գործնական քայլ է անում՝ 1910 թ. մարտի 14-ին Իզմիտի կայարանի դիմաց գտնուող սրճարանի պարտիզապատ սրահում բացելով «Բիւթանիա» անունով լսարան-ընթերցարան, որտեղ ընթերցասէր հանրութեանն անվճար տրամադրւում էին Արեւմտեան Հայաստանում եւ հայկական տարբեր գաղթօջախներում լոյս տեսնող 40 անուն պարբերականներ ու հայալեզու եւ օտարալեզու գրականութիւն[78]:

1908 թ. յեղաշրջումից յետոյ արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական վիճակը մնաց անփոփոխ: Գաւառում եւ հայկական գաղթավայրերում դրութիւնն առաւել սրուած էր, քանի որ հիմնախնդիրներին ականջալուր եղող չկար օսմանեան կայսրութեան գաւառակենտրոններում: Արեւմտահայութեանը մտահոգող եւ լուծման սպասող հիմնահարցերն արծարծւում էին հիմնականում տեղական ազգային մարմինների ժողովների ժամանակ: Դրանք առանձնայատուկ ուշադրութեան էին արժանանում գաւառական մամուլի օրգանների կողմից, որոնք պարբերաբար կոչերով դիմում էին թէ՛ կառավարական շրջանակներին, թէ՛ ազգային կառոյցներին՝ խնդրելով կամ պահանջելով բարելաւել ժողովրդի կենսապայմանները եւ տարբերակներ գտնել տնտեսական թնջուկի վերացման համար: Այս առումով յատկապէս աչքի էր ընկնում «Բիւթանիա» շաբաթաթերթը, որը տնտեսական բաժնին մեծ տեղ էր յատկացնում բոլոր համարներում: Այլ հարց է այն, որ գաւառի թերթերի հրապարակումները մատնւում էին անուշադրութեան եւ մնում էին անտեսուած:

«Բիւթանիան», սակայն, շարունակում էր հետեւողականօրէն անդրադառնալ ու ներկայացնել Թուրքիայի տնտեսական քաղաքականութիւնը, որը յատուկ մշակուած ծրագիր ունէր հայութեան ձեռքից տնտեսական լծակները խլելու, հայ ժողովրդին ունեզուրկ եւ աղքատ դարձնելու, հայի խնդիրը լուծելու նպատակով հայութեանն իր հայրենիքից արտագաղթեցնելու համար: Շաբաթաթերթը հանգամանօրէն լուսաբանում էր հողային հարցը, իրենց տները վերադարձող հայ գաղթականների հանդէպ Թուրքիայում իրականացուող հայահալած քաղաքականութիւնը, երբ պետական համապատասխան օղակներն ընդունում էին այնպիսի որոշումներ, որ հայրենադարձուող հայերը չկարողանային ետ ստանալ նախորդ կոտորածների ժամանակ իրենցից խլուած հողերը, տները եւ կորցրած ունեցուածքի փոխհատուցումը: «Բիւթանիան» փաստեր էր բերում նաեւ այն մասին, որ Թուրքիայում այլ երկրներից (Բոսնիայից, Ռումինիայից, Ռուսաստանից) վերաբնակուող եւ իսլամ դաւանող գաղթականների համար բոլորովին այլ ծրագիր էր իրագործւում, որով նրանց համար ապահովւում էին լաւագոյն պայմաններ «Անատոլիայում» վերաբնակուելու եւ բարեկեցիկ կեանքով ապրելու համար: Պարբերականը հարցապնդմամբ է հանդէս գալիս. «Արդեօք միայն իսլամ գաղթականներն են որ օտար հորիզոններու տակ կը տուայտին, եւ այդ ճակատագիրը աւելի դժնդակ կերպով չ'իշխե՞ր նաեւ հայ եւ ընդհանրապէս քրիստոնեայ ուրիշ գաղթականներու վրայ, որոնք առաւելութիւնը ունին մանաւանդ այս

77 Նոյն տեղում, Իզմիտ, 1911, թիւ 1, էջ 326:
78 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 8, էջ 96:

երկրի հարազատ զաւակները ըլլալու, եւ որոնք հայրենիքի հայրենի հողի սուրբ գաղափարովը տոգորուած՝ անկէ կը սպասեն կարկառուն ձեռքի մը՝ որ սակայն չի դար իրենց օգնութեան[79]: «Տնտեսական բարգաւաճում եւ գաղթական հարց» յօդուածի հեղինակ Աշոտ Պազպազեանը յանգում է այն եզրակացութեան, որ թուրքական կառավարութիւնը ձեւականօրէն ցուցադրում էր, թէ իբր փորձում էր բաւարարել հայրենիք վերադարձած հայ գաղթականների արդարացի պահանջները, այնինչ մինչեւ այդ կառավարական խոստումները կեանքի կը կոչուէին, գաղթական հայը դատապարտուած էր մնալու: Ինչպէ՞ս կարելի էր հաւատալ, թէ Թուրքիայում հաւասարութիւն եւ արդարութիւն էր տիրում[80]:

Հողային հարցը Թուրքիայում «Հայկական հարց նկատուեցաւ»[81]: Այդ կենսական խնդիրը լուծելու համար «քննիչ յանձնախումբեր եկան գացին, ծրագիրներ մշակուեցան, վճիռներ տրուեցան, բայց մնացին չգործադրուած»[82]: Հողային հարցը «Բիւթանիան» «Ո՞ւր է արդարութիւնը» խմբագրականում համարում էր տնտեսական խնդիրների հիմնաքարը, իսկ դրա անլուծելի մնալու հետ էր կապում երկրում ծայր առած դժուարութիւնների վերաճումը քաղաքական պայքարի, ինչը կարող էր յանգեցնել թուրքական պետութեան փլուզմանը[83]: Հողային հարցին է նուիրուած «Բիւթանիայի» 1911 թ. հրապարակումների մեծ մասը: 1912 թ. յունուարի 5-ի «Անցնող տարին» խմբագրականն ամբողջութեամբ անցած տնտեսական տարուայ վերլուծութիւնն է: Բերուող փաստերը վերցուած են Նիկոմիդիա գաւառի տնտեսական կեանքից: Թերթը հիմնականում աննպաստ էր համարում տնտեսական տարին, ինչը պայմանաւորում էր Թուրքիայի սոցիալ-քաղաքական իրադրութեամբ, պատերազմական կացութեամբ, հայ ժողովրդի հանդէպ կիրառուող տնտեսական ճնշիչ քաղաքականութեամբ եւ այլն[84]: «Բիւթանիան» համոզուած էր, որ անգամ համիդեան բռնապետութեան շրջանում Նիկոմիդիայի հայ ազգաբնակչութիւնը կարողացել էր տնտեսական առաջընթաց ունենալ, բայց երիտթուրքական կառավարութիւնն այնպիսի իրավիճակի մէջ էր դրել նրանց, որ նրանք, մնալով անգործ, աստիճանաբար վերածւում էին աղքատացող, տարիների ընթացքում կուտակուած ունեցուածքի հաշուին գոյատեւող զանգուածի: Թերթը օրինակ էր բերում Իզմիտի շրջանը, որտեղ տարիներ շարունակ մարդիկ ապրում էին ծխախոտի մշակութեամբ եւ վաճառքով: Սահմանադրական հռչակուած Թուրքիան մենաշնորհ է հաստատում, եւ «Ծխախոտի Ռէժի» կոչուող ընկերութիւնը ոչ միայն խլում է աշխատանքը ժողովրդի ձեռքից, այլեւ շահագործում է մարդկանց՝ հաստատելով չնչին աշխատավարձ, ծխախոտի բարձր գներ ու անմշակ թողնելով հսկայական հողատարածքներ: «Բիւթանիան» հակասութիւն է տեսնում ստեղծուած իրավիճակում. «Ցանուն ինչի՞ են այդ մենաշնորհները, յանուն Պետական Գանձի շահո՞ւն: Պետական շահ կը նշանակէ ժողովուրդի շահ. այնտեղ ուր ժողովուրդը կը վնասէ, անհնար է, անկարելի է մտածել, որ պետութիւնը կը շահի, որքան ալ լեցուին պետական գանձարանները»[85]: «Բիւթանիան» իր վերլուծութիւնը հաւաստի դարձնելու նպատակով վկայակոչում է Կ. Պոլսի «Ժողովրդային իրաւունքներու ակներեւ պաշտպան» ՀՅԴ «Ազատամարտ» օրաթերթում «Ծխախոտի Ռէ-

79 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 26, էջ 277:
80 Նոյն տեղում, էջ 278:
81 Նոյն տեղում, էջ 191, Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 15, էջ 442:
82 Նոյն տեղում:
83 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 17, էջ 457-458:
84 Նոյն տեղում, Ատաբազար, 1912, թիւ 1, էջ 537:
85 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 11, էջ 123:

ժի» ընկերութեան մասին գրուած յօդուածը: Այդտեղ «ՐԷԺԻՆ» համարւում էր հողագործի նիւթական շահերի համար վնասակար ընկերութիւն: «Բիւթանիայի» կարծիքով՝ «ՐԷԺԻԻ» գլխաւոր նպատակն է «մեծագոյն շահ մը ձեռք ձգել իր բաժնետէրերուն, հոգ չէ թէ իր գործելու պայմաններն ու եղանակը նպաստաւոր թէ աննպաստ ըլլան ծխախոտի մշակին կենսական շահերուն»[86]: «Բիւթանիան» ժողովրդին առաջարկում էր համախմբուած ձեւով իրենց պատգամաւորների միջոցով օսմանեան խորհրդարանում քննարկման առարկայ դարձնել «Ծխախոտի ՐԷԺԻ» ընկերութեանը մենաշնորհից զրկելու հարցը. չէ՞ որ հակառակ դէպքում «ՐԷԺԻՆ» պիտի «առնուազն քառորդ դար եւս երկրագործ տարրին ՇՈՒՇԸ քամի»[87]:

Թուրքիայի շոգեկառքի ընկերութեանը տրուած մենաշնորհով էլ բարձրացուել էին Իզմիտի եւ շրջակայ հայկական գիւղերի համար նախատեսուած տոմսերի սակագները, եւ այդպիսով դժուարացել էր ապրանքի փոխանակումը: Նման քայլերը նպաստելու էին Իզմիտի տնտեսական մահուանը. սա էր «Բիւթանիայի» եզրակացութիւնը[88]: Իզմիտին նուիրուած վերլուծական յօդուածում ահա թէ ինչ էր գրում թերթը. «Իզմիտը փայլուն էր իր վաճառականութեամբ հին ըէժիմին: Ան աշխարհութիւնն ունեցաւ իր ուժերը հաւաքելու նուազ հալածական գետնի մը վրայէ որ էր տնտեսական գետինը: Իզմիտի ոսկիին շողը եթէ հաճէր իսկ մինչեւ Հայաստան հասնիլ՝ արեւը նոյն օրը տասն անգամ մարը մտած կ'ըլլար: Բայց երկար չտեւեց: Ահա Սահմանադրութեան արեգակը: Իզմիտի վաճառականութիւնը չդիմեցի պէս քարանձաւը մտաւ: Պատճա՞ռ: Շոգեկառքի Ընկերութիւնը իր ծանօթ արարքով գուլումի մատնեց իզմիտցի վաճառականը»[89]: Իսկ «Ընկերային եւ տնտեսական կեանքը Իզմիտի մէջ» յօդուածում «Բիւթանիան» Կ. Պոլսից ամէն տեսակէտով մէկ տարով ետ մնացած էր համարում Իզմիտը, որը ժամանակին համարւում էր Թուրքիայի մայրաքաղաքի արուարձաններից մէկը[90]: «Նահանգին գիւղերուն մէջ կեանքը մեռածի պէս բան մըն է: Իզմիտի նահանգին թէ ընկերային եւ թէ տնտեսական կեանքը յոյժ ողբալի վիճակ մը ունի: Նահանգին ոչ մէկ կողմը տնտեսական գործունէութիւն չի տեսնուիր»,- կարդում ենք յիշեալ վերլուծականում[91]:

«Բիւթանիան» վկայակոչում էր Թուրքիայի տնտեսական քաղաքականութեան բացերից եւս մէկը, որի պատճառով հարիւրաւոր հայ մարդիկ էին մահանում: Պետութիւնն անուշադրութեան էր մատնում այն հանգամանքը, որ մի շարք հայկական գիւղերի մօտակայքում առաջացել էին ճահիճներ: Դրանք չէին չորացւում: Բնական է, որ հեկտարներով բերրի հողեր էին վերածւում ճահիճների՝ մնալով անմշակ եւ այդ գիւղերի բնակիչների մօտ առաջացնելով զանազան մահաբեր հիւանդութիւններ: Օրինակ էր բերւում Մարմարաճըգ գիւղը, որտեղից ստացուած թղթակցութիւնից պարզւում էր, որ 300 տուն ունեցող գիւղում երկու ամսուայ ընթացքում 107 մարդ էր մահացել ճահճային տենդից: Թերթի կարծիքով՝ Թուրքիայի մի ծայրից միւսում ցրուած այսպիսի ճահիճների պատճառով «երկիրը կը տուժէ այնչա՜փ կեանքեր ու ահագին արժէքով բերք՝ որը պիտի արտադրէին ատոնք մաքրուելով ու մշակուելով»[92]:

«Բիւթանիան» մի կողմից՝ կառավարութեան ուշադրութիւնն էր հրաւիրում

86 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 16, էջ 186:
87 Նոյն տեղում:
88 Նոյն տեղում, էջ 122:
89 Նոյն տեղում, էջ 126:
90 Նոյն տեղում, Իզմիտ, 1910, թիւ 27, էջ 294:
91 Նոյն տեղում, էջ 295:
92 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 11, էջ 409:

հայկական գաւառում տարիներ ի վեր գոյութիւն ունեցող սոցիալ-տնտեսական խնդիրների վրայ, միւս կողմից՝ հանդէս էր գալիս հիմնահարցերի լուծման տարբեր առաջարկներով: Դրանք հիմնականում զետեղւում էին շաբաթաթերթի էջերում ամփոփուած «Գիւղատնտեսական թերթոն» բաժնում: Յիշատակութեան է արժանի Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից արտատպուած՝ Անդրանիկ Պոտուրեանի «Երկրագործական պայմաններ» յօդուածաշարը, որի առաջին յօդուածը լոյս է տեսել «Բիւթանիայի» 1910 թ. 11-րդ համարում: Նոյն հեղինակի մէկ այլ՝ «Մնունդ» յօդուածաշարում «Եըկրագործական գիտելիքներ» խորագրի ներքոյ հանրամատչելի ձեւով ներկայացւում էին անասուններին կերակրելու գաղտնիքները: Այս շարքի առաջին յօդուածը տպագրուել է «Բիւթանիայի» 1911 թ. 2-րդ համարում: Անդրանիկ Պոտուրեանն այս յօդուածաշարը գրել է յատուկ «Բիւթանիայի» համար: Յիշեալ յօդուածաշարերով շաբաթաթերթը փորձում էր հարստացնել ընթերցողների երկրագործական գիտելիքները:

Ընթերցողներին ոգեւորելու նպատակով խորագրերի ու բաժինների նիւթերը ներկայացնում էին նաեւ տնտեսութեան այս կամ այն ոլորտում հայերի ունեցած ձեռքբերումները: Մեծ յօդուած կայ Իզմիտի սանճագի շերամաբուծական յաջողութիւնների մասին[93]: Նշւում էր, որ եթէ Ատաբազարում արհեստագործութիւնն էր զարգացած, իսկ Պարտիզակը, Օվաճըգը եւ դրանց շրջակայ գիւղերը մշակում էին ծխախոտ, ապա Իզմիտի սանճագում զարկ էր տրուած թթենիի մշակութեան գործին եւ շերամաբուծութեանը: Շաբաթաթերթը շերամաբուծութիւնը համարում էր «արդիւնաւոր գործ» եւ ցանկանում էր, որ այն օր օրի զարգանար ու տարածուէր, եւ «չարքաշ ու բազմակարօտ երկրագործը օգտուէր անոր բարիքներէն»[94]:

Տնտեսական խնդիրները լուծելու համար «Բիւթանիան» առաջարկում էր հիմնել հասարակական միութիւններ, որոնք պիտի գիտելիքներով, գործիքներով ապահովէին ժողովրդին: Բացի այդ, ժողովուրդն իր հերթին պիտի ակտիւ լինէր եւ պետութիւնից պահանջէր պաշտպանել օրէնքով սահմանուած իր իրաւունքները: «Բիւթանիան», իհարկէ, հասկանում էր, որ հայ ժողովուրդը գործ ունէր թուրքական բռնապետութեան հետ, որտեղ սոցիալ-տնտեսական հիմնահարցերը սերտօրէն կապուած էին քաղաքական խնդիրների, մասնաւորապէս՝ Հայկական հարցի լուծման հետ: «Այսօր հիւանդ է Անատոլուն: Բժիշկը-սահմանադրական Կառավարութիւնը: Թուրքիոյ ապագան Անատոլուն է. Անատոլուն եթէ խաղաղի, Թուրքիան փրկուած է». սա էր «Բիւթանիայի» համոզմունքը[95]:

93 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 13, էջ 429:
94 Նոյն տեղում:
95 Նոյն տեղում, Ատաբազար, 1911, թիւ 15, էջ 442: